



«ՓՈՂ ՏՈՒԷ՛՛ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ՓԱՆ.» ԴՈՒԿ ԺԸ 16:

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1906

ԹԻՒ 7

ԱՆԳՔՈՒԹԻՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ԴԵՄ
 Ըսուած է թէ «Պրդարը կ'ողորմի
 իր կենդանիին» Չկայ այնքան չար
 մարդ մը որուն սրտին մէջ քաղցրու-
 թեան կայծ մը թողուած չըլլայ: Մա-
 նուկներու սէրը և վատահումիւնը կը
 բողբոքեն ամէն անձնասէրին և քար-

այդ չարչարուող կենդանիին վրայ, և
 զգացած զուրթէն ինք մարդուն ետեւէն
 վազելով կ'ըսէ թէ ըրածը անգթու-
 թիւն է, և կ'աղայէ անոր որ կայնի:
 Մարդը կը պատասխանէ թէ ձին ի-
 րենն է և ինք իր ուզածը պիտի ընէ
 անոր: Ասանկ շատ ձիապաններ կան,

պիտի անգութ մարդու մը հետ:
 Ենողքները պարտին հոն տանիլ
 որ քաղցրաբարոյութեան դասեր սոր-
 վեցնեն իրենց զաւակներուն: Դեռ
 անցեալ օր տեսանք փոքրիկ շուն մը
 որուն ետեւի սրունքները վստասուած
 էին, հաւանօրէն անոնց վրայէն կառք

սիրտին: Շատ բարութիւն-
 ներ կ'ըլլան քաղաքավա-
 րութեան համար, կամ փո-
 խարէն ընդունելու ակնկա-
 րութիւնով: Ողորմութիւն-
 ներ կրնան տրուիլ ցուցա-
 մտութեամբ, կամ իբրև
 շահու տրուած ստակ, զոր
 տուողը կը յուսայ մեծ շա-
 հով ետ առնել հանդերձ-
 եալ աշխարհին մէջ: Բայց
 եթէ մարդ իրօք ողորմած
 է սրտին մէջ, ողորմած կ'ըլ-
 լայ բոլոր անոնց որոնք կը
 նեղուին, և ոչ միայն մար-
 դոց, այլ՝ կենդանիներուն
 ալ: Մինչև անգամ շուն մը,
 որ տառապանքի մէջ է, ա-
 նոր ներսիդին զթութեան
 զգացում կ'արթնցնէ: Եթէ
 տեսնենք մարդ մը որ կը
 չարչարէ շուն մը կամ ան-
 գթաբար կը ծեծէ ձի մը,
 պէտք չէ որ ուզենք որ ա-
 նիկա այդ կարողութիւնն
 ունենայ: Եթէ անիկա ան-
 գութ է անասուններուն,
 ըսել է թէ իր բնութեանը
 մէջ կայ այդ անգթութիւ-



մը անցած ըլլալով, և պզտիկ
 տղաք զանիկա կը քարկո-
 ծէին, մինչ խեղճ կենդանին
 առջևի սրունքներով յառաջ
 կը քաշկատուէր: Այս տղա-
 քը իրենքըրենք անգութ
 մարդիկ ըլլալու կը պատ-
 ըաստէին: Աղէկ չըլլար որ
 դպրոցի տղաք իրենց նշա-
 նաբաններէն մէկն ընեն
 «քաղցրութիւն դէպի կեն-
 դանիները» և իրարու օգ-
 նեն այդ նշանաբանը ի գործ
 դնելու:

ՀԱՄԱԿԱՆՔԻ ՇՆՈՐՀԱՐԸ

Շատ տարիներու բեռան
 տակ կրած ծեր կին մը կար-
 Գեղացիք «մեծ մայր» կը
 կոչէին զանիկա, որ գրեթէ
 իր բոլոր ժամանակակիցնե-
 րէն աւելի ապրած էր: Իր
 մէկ աղջկան տունը կը բնա-
 կէր: Շատ կը սիրէր մանուկ-
 ները, պզտիկները հրա-
 պուրելու իրեն յատուկ կեր-
 պերը ունէր. այնպէս որ
 քաղաքի տղաքն ու աղջիկ-

նը, և մարդոց ալ անգթութիւն պի-
 տի ընէ եթէ գրգռուի:
 Պաակերին մէջ ասանկ մարդ մը
 կը ներկայացուի: Իր խեղճ ձիին
 տանելու կարողութենէն վեր ծանր
 բեռ մը բեռցուած է. և մարդը կը
 ծեծէ զանիկա որպէս զի յառաջ քա-
 լէ: Փոքրիկ աղջկան սիրտը կը մորմոքի

և անոնց իրենց ձիերուն ցուցած ան-
 գթութիւնը ճամբորդին զգալու բոլոր
 հաճոյքը կը կորսնցնէ: Բարեկամ մը
 ունինք որ կրկին և կրկին վար իջաւ
 կառքէն կառապանին պարագ սեղը
 բողբոքէին ետքը՝ անոր անգթութեան
 դէմ, և ճամբուն մնացած մասը
 քալեց, չուզելով կառք նստիլ այս-

ները ամէն օր դպրոցի ճամբուն
 վրայ կը սիրէին անոր քով վազել,
 տեսնել զանիկա, և իրենց կեանքին
 պատմութիւնները ընել անոր: Ուրիշ-
 ներ, թերևս շատ զբաղեալ ըլլալով,
 կամ ժամանակ չունենալով և կամ
 անոնց պզտիկ պարագաները անկա-
 րևոր համարելով անոնց մտիկ ընել

չէին ուզեր, բայց «մեծ մայրը» այդպէս չէր խորհեր:

Թերևս փոքրիկ աղջիկ մը չըջագգեաւ մը ունէր որ հաճելի չէր իրեն, և «մեծ մայրը» պիտի միջամտէր և ըսէր, «Այո» կը հասկնամ թէ ի՞նչ ըսել կ'ուզես. ատիկա չես կրնար հագնել այս վիճակին մէջ. միայն քիչ մը փոփոխութիւնով կը շտկուի: Ըսէ մայրիկիդ թէ ես կը կարծեմ որ աւելի աղէկ կ'ըլլայ եթէ ճիշդ սապէս ընէ», և այլն:

Երբ տղաքը ներս կու գային խաղէն, կը կայնէին քիչ մը խօսակցելու համար սիրելի ծերուկ տիկինին հետ որ ութսունը անցուկ էր: Եւ անիկա երբեմն կ'ըսէր «Յովհաննէս», կամ «Յակոբոս, ես կը յիշեմ ձեր հայրը երբ տղայ մըն էր: Այն ատեն տղաքը զուարթ ժամանակ կ'անցընէին, ինչպէս դուք հիմա, և քու հայրդ անոնց պարագլուխն էր: Հաւատա որ այնպէս էր»: Զուարթ փոքրիկ տղաք բոլորովին տարբեր ազդեցութիւն կ'ընդունէին «մեծ մայրէն» քան իրենց հայրերէն, որոնք լուրջ և մտածութիւններու մէջ թաղուած ծեր մարդիկ կերակէին իրենց, և իբր թէ բան չէին գիտեր տղոց զրօսանքներուն վրայ:

Օր մը գեղին մէջ լուր պտըտեցաւ տունէ տուն, և ամէն մէկ տան մէջ ցաւով կը պատմուէր թէ «մեծ մայրը մեռած էր նախորդ գիշեր»: Տեղին պղտիկները ամէնն ալ զգացին թէ մանուկներու ամէնէն պատուական բարեկամը, որու նման երբեք ունեցած չէին անոնք, գացած էր: Երբ յուզարկաւորութեան ժամանակն հասաւ, պաշտամունք կատարուեցաւ թէ՛ տան մէջ թէ՛ եկեղեցոյ մէջ, և բոլոր սգակիր մանուկները եկան մէկ մէկ, երկու երկու, երեք երեք և խմբովին, դագաղին վրայ դրուելու ծաղիկներով:

Այդ օր գոց մնաց դպրոցը, վասն զի ոչ ոք եկաւ երբ առաւօտեան զանգակը հնչեց: Այնչափ շատ մանուկներ խռնուեցան տան մէջ առաջին պաշտամունքին համար, որ ննջեցեալին ընտանիքը յաւելուածոյ կառքեր վարձեց զանոնք եկեղեցի տանելու համար: Բայց ընտանիքը պատրաստուած չէր հոն տեղի ունեցած սրտաշարժ տեսարանին համար — եկեղեցիին դրեթէ կէսը լեցուած էր տղոցմէ և աղջիկներէ, որոնք նստան տխուր դէմքով և պատկառոտ լուրթեամբ, և կը սպասէին այն վայրկեանին երբ իրենց զգացած

վշտին վերջին հաւաստիքը պիտի մատուցանէին յոյժ թանկագին բարեկամի մը յիշատակին:

Այսպէս «մեծ մայրը» երկնային տունը գնաց, և վստահ եմ թէ երկինքին մէջ ալ կը շարունակէ կարեկցութեան և մաքուր ու անանձնասէր սիրոյ այն ցանկալի շնորհքը, որ «մեծ մայրին» կեանքը այնքան հազուագիւտ կերպով գեղեցկացուց երբ հոս կը գըտնուէր ան:



ՆԱԲԱԻ ԼԵՈՒ

Նաբաւ անունը դանազան կերպերով կը գործածուի Հին կտակարանին մէջ: Անիկա երկու քաղաքներու անուն էր: Այս քաղաքներէն մէկը Յորդանանու արևելեան կողմն էր և այդ ժամանակ Ռուբէնի ցեղին կը վերաբերէր (Թու. ԼԲ. 38, Ա Մնաց



Ե. 8), բայց յետոյ Մովաբի ձեռքն անցաւ (Ես. ԺԵ. 2, Երեմ. ԽԲ. 1, 22): Միւս քաղաքը Յորդանանու արևմտեան կողմն էր և «Միւս Նաբաւ» կը կոչուի Նէեմ. Է. 33ին մէջ: Նաբաւ էր նաև անուն կուռքի մը զոր կը պաշտէին Բաբելոնացիք, Ասորեստանցիք, և զոր կը յիշեն թէ՛ Եսայի և թէ՛ Երեմիա մարգարէները (Ես. ԽԶ. 1, Երեմ. ԽԲ. 1):

Բայց երբ կը խօսինք Նաբաւի վրայ, ընդհանրապէս կ'ակնարկենք այդ անունը կրող այն լեռը որուն գագաթէն տեսաւ Մովսէս խոստացուած երկիրները և ուր թաղուեցաւ ձորի մը մէջ յիշեալ լեռան կողին վրայ և կամ ստորոտը: Բ Օր. ԼԲ. 49 և ԼԳ. 1 էն կը հասկցուի թէ անիկա Մովաբի երկրին մէջ էր և Երեմովի դիմաց: Զամբորդները բաւական ժամանակ ի զուր փնտռեցին

այսպէս նկարագրուած լեռ մը, և ասկէ մինչև իբր յիսուն տարի առաջ ստուգուած չէր թէ անիկա ճիշդ ո՞ր լեռն էր: Երբեքովի անմիջապէս դիմացի կէտէն քիչ մը դէպ հարաւ կը գտնուի անիկա: Մեռեալ ծովուն արևելեան եզրերը և այս ծովուն հիւսիսային ծայրին մօտ բարձրութիւն մը կայ որ տակաւին կը կոչուի «ձէպէլ Նէպպա»:

Ի՞նչպէս վսեմ է այն տեսարանը զոր կը նկարագրէ ներշնչեալ մատենագիրը: Խորայելի ծերունի առաջնորդին, աշխարհի պատմութեան մէջ ամէնէն դիւցազուններէն մէկուն, որուն ազդեցութիւնը մինչև ներկայ օրս կը շարունակէ — ազդեցութիւն որու նման թերևս այսչափ երկար տարիներ առաջ պարզ ու լիշուէ մարդ չէ ունեցած — անոր մահուանէն առաջ կ'արտօնուի տեսնել այն երկիրը դէպ ուր քառասուն տարի առաջնորդած է իր ժողովուրդը: Չենք գիտեր թէ կա՞ր արդեօք թէ ոչ՞ գերբնական ազդեցութիւն որով անիկա կարող եղաւ տեսնել Աւետեաց երկրին աւելի մասերը քան զոր ուրիշներ կրնային տեսնել միևնոյն դագաթէն նայելով:

Երբ կը մտածենք այն տեսարանին վրայ, երկու խորհուրդ կու գայ մեր միտքը: Նախ՝ թէ անձնասէր մէկուն համար ցաւ պիտի ըլլար տեսնել այն երկիրը ուր իրեն թոյլ չարուեցաւ մտնել, Բայց Մովսէս աւելի կը խորհէր ժողովրդին վրայ զոր կը սիրէր և որու համար այնչափ ժամանակ աշխատած էր: Անոնք սիրելի էին իրեն. նաև Եհովայի ընտրեալ ժողովուրդն էին, որոնք Անոր գիտութիւնը կենդանի պահելու էին իրենց մարին մէջ, և երբ Մովսէս տեսաւ երկիրը զոր անոնք պիտի ժառանգէին, քիչ խորհեցաւ իր անկէ դուրս թողուելուն վրայ:

Երկրորդ՝ թէ Մովսէսի տեսածին նման բան մը երբեմն կը շնորհուի Աստուծոյ զաւակներուն: Անոնք տեսիլներ կը տեսնեն երկնային Գանանու վրայ ուր մտնելու մօտ են — ոչ թէ իրապէս տեսնելով զայն, այլ գաւնիկա շատ մօտ զգալով: «Գրեալ տիանոսի ճամբորդութեան» զիբբին մէջ Պընեան կը ներկայացնէ Զուարճալի Լեռներէն դիտուած այսպիսի տեսիլ մը: Զգալ թէ երկինքը այնպէս իրական է ինչպէս այն երկիրը զոր Մովսէս տեսաւ, և թէ անիկա հեռու չէ, մեզի կ'օգնէ մահուան

Յորդանանին մօտենալու առանց վախի : Երանի՛ թէ ամէն ալ ի Յիսուս ֆրիստոս հաւատքով վերաբերէինք Աստուծոյ հոգևոր խորայէլին, և օր մը մտնէինք մեր ժառանգութիւնը օրհնեալ Աւետեաց Երկրին մէջ :




ՊՁՏԻԿ ՆՎԱՆԱԿԸ

Սովի մը ժամանակ հարուստ մը քաղաքին ամէնէն աղքատ մանուկները իր տունը կանչեց և ըսաւ անոնց, «Հոն հացով լեցուն կողով մը կայ, Ամէն մէկը կրնաք մէյակ նկանակ առնել անոր մէջէն, և գալ ամէն օր մինչև որ Աստուած աւելի աղէկ ժամանակներ դրկէ :»

Մանուկները իսկոյն շրջապատեցին կողովը, և սկսան կուռիլ ձեծկուռի կացին համար, վասն զի ամէն մէկը կ'ուզէր ամէնէն պատուականը առնել : Եւ վերջը ելան գացին առանց շնորհակալութեան բառ մը խոսելու : Միայն Յրանցիւքա, մաքուր բայց խեղճ հագուած փոքրիկ աղջիկ մը, մնաց հեռուն կայնած, և առաւ մնացած ամէնէն պզտիկ նկանակը, իր ձեռքով համբոյր մը դրկեց մարդուն և հանգարտութեամբ և վայելուչ կերպով տուն գնաց :

Հետեւալ օրը երբ մանուկները եկան, նորէն նոյն անկարգութիւններն ըրին, և Յրանցիւքա այս անգամ ստացաւ նկանակ մը որ միւսներուն հազիւ կէսը կար : Բայց երբ տուն հասաւ և մայրը կտրեց հացը, մէջէն նոր կտրուած արծաթ ստակներ ինկան : Մայրը վախցաւ և ըսաւ, «Այս ստակը անմիջապէս ետ տար, ինչու որ յայտնի է թէ դիպուածով մտած են հացին մէջ : Յրանցիւքա ըրաւ իր մօր ըսածին պէս : Բայց բարեւէր մարդը ըսաւ անոր, «Ոչ ոչ, դիպուած չէր ատիկա : Ես ստակները ամէնէն պզտիկ հացին մէջ դնելով եփեցի, քեզ վարձատրելու համար, բարի աղջնակ : Միշտ այդպէս խաղաղասէր և դո՛հ եղիր :»

Ով որ կ'ուզէ մանաւանդ պզտիկ նկանակ մը առնել քան կուռիլ մեծի մը համար, միշտ օրհնութիւն կը բերէ տունը, մինչև անգամ եթէ սսիկ չեփուի հացին մէջ :



ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԸ ՎՎԱՅՈՒԹԻՒՆԸ

Անզգիւրէն լրագիր մը, Էնֆիլե, կ'ըսէ թէ Կիրակի իրիկուն մը երիտա-

սարդաց հոգևոր ժողովի մը մէջ, որուն իւրթն էր ժուժկալութեան խնդիրը, ներկայ կը գտնուէր գաւառին եղեռնադատ ատեանին փաստաբանը, երիտասարդ մը, որ եկեղեցւոյ անդամ չէր : Ոտք ելաւ և ըսաւ, «Ես երբեք ընտանի չեմ այս տեսակ ժողովի մը, բայց բան մը խօսիլ կ'ուզեմ ձեր խօսակցութեան նիւթին նկատմամբ : Ես դատարանի մէջ քառասունըութ ոճրագործներու պաշտպանութեան պաշտօնն ունեցած եմ, և անոնց քառասունուերկուքը արբեցութեան պատճառաւ ոճրագործ եղած էին կամ բողոքովին և կամ մասամբ :»



ՏԱՂԱՍԱՐ ԾԻՆՈՂ ԹՈՂՈՒՆԸ

Ասիկա Աւստրալիոյ թռչուն է սև և կապոյտ փետուրներով, որոնք այնպէս պայծառ և փայլուն են որ մետաքսի կը նմանին : Բայց այս թռչունները մասնաւորապէս նշանաւոր ընողն են անոնց շինած բոյները : Անոնք թռչուններուն մէջ ամէնէն հանճարեղ ճարտարապետներն են, և գմբեթի ձևով տաղաւար մը կը շինեն ցախերէ, այնպէս հիւսելով սաղաւարը որ ցախերուն գագաթները ամէնն ալ դուրս կը նային և թռչուններուն մտնել ելլելուն արգելք չեն ըլլար : Եւ անոնք միայն այդ բոյները չեն շիներ հանգստութեան համար, այլ՝ զարդի համար ալ : Ունին նաև տարօրինակ ունակութիւն մը հաւաքելու աչքի զարնող ամէն առարկաներ, ինչպէս՝ պայծառ փետուրներ, խցիկներ, պայծառ քարեր, գոյնզգոյն քուրջեր և մանր կենդանիներու ոսկորներ, զորոնք իրենց բոյներուն մուտքին մօտ կը դնեն : Այս թռչուններուն այս ունակութիւնը այնչափ աղէկ ճանչցուած է, որ բնիկները միշտ կը փնտռեն անոնց բոյները և վատահ են թէ բան մը պիտի գտնեն իրենց կորսնցուցածնե-



կեղեցիին միւս ծայրը կը գտնուէին, ուր հաւաքուած էին Յակոբիկի տարիքն ունեցող խումբ մը տղաք, և մարդ մը կը նստէր երգիւնին առջև : Շուա ետքը մարդը սկսաւ հնչեցնել երգիւնը և տղաք սկսան երգել : Արդ, ոչ ոք որ Յակոբիկը կը տեսնէր պիտի խորհէր թէ անիկա երաժիշտ էր : Բայց Յակոբիկ մեծ համբաւ կը վայելէր իր բարեկամներուն մէջ, ուրոնք վատահ էին թէ օրուան համբաւաւոր երգիչներէն ոչ մէկը ունէր ձայն զոր անուշութեան կողմանէ կարելի ըլլար Յակոբիկի ձայնին հետ բաղդատել :

Այնպէս կ'երևի թէ այս թռչունները գեղեցկագիտական ճաշակ ունին և թէ իրենց բնակարաններուն մօտ գտնուած այդ պայծառ բաները անոնց ծայրի տեղ են :

ՅԱԿՈԲԻԿ

Յակոբիկ նստած էր փողոցի անկիւնը և կը մտածէր : Յուրտ հովը սաստիկ կը փչէր և կը սպառնար անոր գլխարկը թռցնել, Յակոբիկ հոգ չէր ըներ հովը : Այդ օր իրիկուն գէմ յաջողութիւն ունեցած էր և կանուխ ծախած էր բոլոր թերթերը, և հիմա կեցեր ու կը խառնչուէր իր գրպանին մէջի քանի մը դրամները, որոնցմով կարող պիտի ըլլար վայելել լաւ, տաքուկ կերակուր և գիշերուան պառկելու տեղ մը : Դարձաւ և ժուռ եկաւ փողոցէ փողոց մինչև որ հասաւ քաղաքին մէկ թաղը, ուր շատ քիչ անգամ եկած էր : շատ զարգացած թաղ մը անոր շքեղ, լայն պողոտայէն դատելով : Յակոբիկ մտած էր այս ատեն և խորհեցաւ ետ դառնալ : Բայց ահա իր ուշադրութիւնը գրաւեց երգի ձայն մը : Չայնը մօտակայ եկեղեցիէ մը կու գար, որուն դուռը բաց էր : Ներսի կողմը կոկիկ և տաքուկ կ'երևէր : Ոչ ոք կը տեսնուէր, և Յակոբիկ կամացուկ մը ներս մտաւ և նըստաւ եկեղեցիին ետևի կողմը որ կէս մութ էր : Լոյսերը եւ կեղեցիին միւս ծայրը կը գտնուէին, ուր հաւաքուած էին Յակոբիկի տարիքն ունեցող խումբ մը տղաք, և մարդ մը կը նստէր երգիւնին առջև : Շուա ետքը մարդը սկսաւ հնչեցնել երգիւնը և տղաք սկսան երգել : Արդ, ոչ ոք որ Յակոբիկը կը տեսնէր պիտի խորհէր թէ անիկա երաժիշտ էր : Բայց Յակոբիկ մեծ համբաւ կը վայելէր իր բարեկամներուն մէջ, ուրոնք վատահ էին թէ օրուան համբաւաւոր երգիչներէն ոչ մէկը ունէր ձայն զոր անուշութեան կողմանէ կարելի ըլլար Յակոբիկի ձայնին հետ բաղդատել :

Յակոբիկ իսկոյն հետաքրքրուեցաւ երբ երաժշտութիւն լսեց եկեղեցիին մէջ : Ո՛հ, այն գեղեցիկ երաժշտութիւնը : Յակոբիկ իր կեանքին մէջ անոր նման բան երբեք չէր լսած : Անիկա վայրկեան մը գրեթէ ապերջանիկ ըրաւ զինք, և պիտի ելլէր երթար, միայն թէ այնչափ դրաւուած է որ չէր կրնար երթալ : «Բայց տղա-

